

տեսանեմք զոք աստուածապաշտ գնացիւք, գիտութեամբ, բարեկրօնութեամբ եւ լուսաշաւիղ գործօք, ոչ միայն ոչ ցանկամբ բերել յանձին զբարի նախանձն եւ նմանիլ վարուց նոցա, այլ ջանամբ եւ զայնս իսկ խափանել յայնպիսի գնացից :

Եւ այսպէս՝ երբեմն ի հաւատն գնեմք արատ, որպէս ասէին Ղուբաշէ «բոյնէ ծայրէ է՛. եւ երբեմն զվարս անուղիղս համբաւեմք զնոսս ունել : Որք զգերանն, որ յաչս մեր, ոչ տեսանելով՝ ի վերայ գիտանոցի ելեալ՝ զայլոց ականց զշիւղն փողով ազդեցութեան հրատարակեմք. անկանելով միշտ ի վերայ եկեղեցեաց եւ վանօրէից, տիրատեաց գոլով եւ տիրամերժ : Մինչ զհայրապետն սուրբ եւ զմայրն հաւատոյ զԿաթողիկէն սուրբ, ինքեքոյ պէսպէս փորձութեան եւ վշտաց ոչ զանգիտեմք արկանել :¹

Արդ՝ եթէ ընդ գլխոյն մերոյ այսպէս անեմք՝ զանդամն զինչ : Զհոյվեան անգամ գիշատեմք, որ է մեղանշու մն ընդգէմ Հոգւոյն Սրբոյ, ուր մնաց թէ զգառինսն : Պատճառելով զպատճառս մեղաց՝ թէ ազգական եմ անցելոյն եւ կամ

1 Ս. Գրիգոր Նարեկացիին կականարկէ : Ծայրէ ի մասին տես էջ 59, Ծանօթ 1 :

2 Էջմիածնի խեղճ ու կրակ վեճակին նկարագրութիւնը : Թիկնածուներու արարքներուն արգիւնքն էր Մայր-Աթոռոյ անկման պատճառը : Կոլտէ յառաջ ինչ որ էր Պոլսոյ պատրիարքութեան վեճակը, գրեթէ նոյն էր Էջմիածնի վեճակն ալ : Այս խեղճութիւններուն վերջ տալու համար է որ, Կոլտ 1726 (Ունեցիի) ընտրութիւնը Պոլիս ընել տուաւ կանոնաւոր ժողովքի մը մէջ : Ունեցիէն ետքը՝ Աբրահամ Բ. Մշեցին, Կոլտի եւ Շղթայակրի հետ համաշուկէ՝ Աբրահամ ընտրութիւնն ալ Ունեցիի ընտրութեան ծրագրով եղաւ : Գժբխտաբար դարման մը չեղաւ այս. քիչ ետքը Սահակ-Ահապիի եւ Ղազար Զահեցիին ընտրութիւնները, եւ ասելի ետքը՝ Գաւթ-Գանիելի խնդիրները, պատճառեցան պատմութեան մէջ քստմենի էջեր գրաւած են :